«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 61-03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 28.07.2020թ. ժամը 16:15

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 16.06.2020թ-ին ստացված,ՀՀ Քննչական կոմիտեյի Երևան քաղաքի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ՝ Ա.Ս.Մնացականյանի միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի նախկին և ներկա սնանկության գործով կառավարիչներ՝ Լևոն Պետրոսյանի և Արտակ Պետրոսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ,վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և միջնորդության արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հուլիսի 28-ին,16-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ ՀՀ Քննչական կոմիտեյի Երևան քաղաքի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ՝Ա.Ս.Մնացականյանը
Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի նախկին և ներկա սնանկության գործով կառավարիչներ՝ Լևոն Պետրոսյանը և Արտակ Պետրոսյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի նախկին սնանկության գործով կառավարիչ՝ Լևոն Պետրոսյանը
Դիմումատու՝ ՀՀ Քննչական կոմիտեյի Երևան քաղաքի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ՝Ա.Ս.Մնացականյանը և Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի ներկա սնանկության գործով կառավարիչ՝Արտակ Պետրոսյանը պատշաճ ծանուցված լինելով իրենց կամ իրենց ներկայացուցչների ներկայությունը,չէին ապահովվել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 16.06.2020թ-ին ստացված,ՀՀ Քննչական կոմիտեյի Երևան քաղաքի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ՝ Ա.Ս.Մնացականյանի միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի նախկին և ներկա սնանկության գործով կառավարիչներ՝ Լևոն Պետրոսյանի և Արտակ Պետրոսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, միջնորդությամբ նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ սնանկության գործով

ներկա կառավարիչ՝Ա.Պետրոսյանը տեղեկացվել է հանձնաժողովի նիստի և քննարկվող միջնորդության վերաբերյալ և բանավոր կարգով ներկայացրել է իր նկատառումները առ այն,որ փաստական հանգամանքները հիմնականում վերաբերվում են իր կառավարիչ նշանակվելուց առաջ տեղի ունեցածի հետ և ինքը որևէ բացատրություն, հաստատող կամ բացառող հանգամանք չի կարող ներկայացնել:Հանձնաժողովի նախագահն նշեց,որ իր կողմից կառավարչին շեշտադրվել է,որ իր ներկայությունը ցանկալի է,քանի որ նիստի ընթացքում կարող են առաջանալ հարցեր,որոնց վերաբերյալ իր բացատրությունները կամ կարծիքը,կարող են օգնել հանձնաժողովին եզրակացության գալու,բայց ինչպես տեսնում եք կառավարիչը ներկա չի և ինքը առաջարկում է նիստը շարունակել առանց ներկա պահին սնանկության գործով կառավարչ հանդիսացող Ա.Պետրոսյանի:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներից հայտնել կարծիքներ առանց ներկա պահին սնանկության գործով կառավարիչ հանդիսացող՝Ա.Պետրոսյանի և միջնորդություն ներկայացնող քննիչի, նիստը շարունակելու վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ միջնորդությամբ նշված փաստերը վերաբերվում են հիմնականում նախկին կառավարչի կողմից օրենքի կիրառման իր հիմնավորումներին և նախկին կառավարչ՝Լ.Պետրոսյանը ներկա է նիստին և պատրաստ է բացատրություններ ներկայացնելուն,ուստի նպատակահարմար է սկսել նիստը առանց դիմումատուի,իսկ ներկա կառավարչի հետ կապված հարցերի առաջանալու դեպքում իր կարծիքով հնարավոր է նաև նիստը հետաձգելը:Հանձնաժողովի անդամը առաջարկեց նիստը շարունակել կառավարչի և դիմումատուի բացակայությամբ:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ:

«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և եզրակացության եկան, որ անհրաժեշտություն չկա երկրորդ անգամ սնանկության գործով կառավարչի բացակայության պատճառով հետաձգել կազմակերպված նիստը և քանի որ առկա են ուսումնասիրության համար բավարար նյութեր նիստը շարունակել կառավարչի բացակայությամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 16.06.2020թ-ին ստացված,ՀՀ Քննչական կոմիտեյի Երևան քաղաքի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ՝ Ա.Ս.Մնացականյանի միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի նախկին և ներկա սնանկության գործով կառավարիչներ՝ Լևոն Պետրոսյանի և Արտակ Պետրոսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարիչների վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար 2020թ-ի Հուլիսի 28-ին, ժամը 16:00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը շարունակել սնանկության գործով կառավարիչ՝Արտակ Պետրոսյանի և միջնորդաբերի բացակայությամբ:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը՝ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով միջնորդությունը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց հանձնաժողովի անդամ Արմինե Մովսիսյանին,ով հակիրճ ներկայացնելով «Հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին»միջնորդագիրը մասնավորապես նշեց,որ քրեական գործի շրջանակներում կատարված քննությունից պարզված հանգամանքներում կառավարչի կողմից լիարժեք չի կատարվել «Սնանկության

մասին»ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով նախատեսված գույքագրումը և 47-րդ հոդվածով նախատեսված պարտապանի բնականոն գործողությունների վրա իրականացված հսկողությունը,որի հետևանքով հնարավորություն է ստեղծվել պարտապանի համար կատարել հակաօրինական գործողություններ,միջնորդել է ՍԳԿԿ ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովում և ձեռնակել գործուն միջոցներ հետագայում նմանօրինակ խախտումները բացառելու համար:

Միջնորդագրի՛ ներառած փաստերի վերաբերյալ բացատրությունների հնարավորություն տրվեց Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի նախկին սնանկության գործով կառավարիչ՝ Լևոն Պետրոսյանին,ով մասնավորապես հայտնեց,որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2016թ-ի վճռով սնանկ ճանաչված Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի սնանկության վարույթով նույն դատարանի 14.11.2016թ-ի որոշմամաբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ինքը:

Կառավարիչ Լևոն Պետրոսյանը նշեց որ ստանձնելով կառավարչի լիազորությունները ձեռնարկել է միջոցներ պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի հայտնաբերման և գույքագրման ուղղությամբ:Կատարված գործողությունների ընթացքում հնարավոր չի եղել այդ պահին պարզել վեճի առարկա գույքի/սեղաններ և աթոռներ/ սեփականության իրավունքը,քանի որ դրա վերաբերյալ արդեն կար վեճ և այդ պահին բողոքարկված և նոր քննության նշանակված դատական ակտ,ըստ որի այդ գույքը պատկանում էր Կ.Կնյազանին:Կառավարիչը նշեց որ տվյալ ապրանքատեսականին արգելադրված էր ԴԱՀԿԾ-ի կողմից և բողոքարկվել էր հենց այդ արգելադրումը,որի շրջանակներում նաև պարզաբանման ենթակա էր գույքի սեփականության իրավունը,ուստի իր կողմից այդ գույքը չի գույքագրվել,քանի որ չկար վտանգ այդ գույքի հետագա իրացման վերաբերյալ և դատական ակտի կայացումից հետո ,եթե գույքը կհանդիսանար պարտապանի սեփականություն իր կողմից կկատարվել լրացուցիչ գույքագրում,որը իր կարծիքով թերացում կամ անգործություն չի կարող դիտվել:

Ինչ վերաբերվում է պարտապանի բնականոն գործունեության և առողջացման ծրագրի ընդունման գործընթացի ընթացքում պարտապանի գործունեության վրա իրականացրած հսկողությանը,ապա դրա վերաբերյալ հայտնեց,որ իր կողմից իրականացված հսկողությունը կատարվել է իր կարծիքով պատշաճ,քանի որ պարտապանի կողմից կանոնավոր կերպով ներկայացվել են համապատասխան հարկային հաշվետվություններ և վճարվել են հաշվարկված հարկերը,որին ավելի կանոնակարգված տեսք տալու համար պարտապանի կողմից ներկայացվել է ֆինանսական առողջացման ծրագիր,որը երկար քննարկվել է պարտատերերի կողմից և դատարանում և վերջապես մերժվել է,բայց այդ ժամանակաշրջանում պարտապանը ունեցել է բնականոն գործունեություն իրականացնելու իրավունք,որը և իրականացրել է:Կառավարիչը անդրադարձավ նաև պարտապանի գործունեության դադարեցման վերաբերյալ որոշումից հետո նրա իրականացրած միջնորդության մեջ առկա,գործունեության փաստին,որի վերաբերյալ հայտնեց,որ իր կողմից գրավոր կարգով այդ որոշումը ներկայացվել է պարտապանին,չնայած այն փաստին որ նա այդ որոշումը ստացել էր դատարանից,և վերցրել է պարտավորագիր գործունեություն չիրականացնելու վերաբերյալ,բայց հետագայում պարզվել,որ նա իրականացրել է որոշակի գործունեություն,որի համար էլ կանչվել է պատասխանատվության:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը ուսումնասիրելով կառավարչի կողմից հիշատակված և ներկայացված վճիռները,որոշումները և փաստաթղթերը հայտնեց այն կարծիքը,որ ըստ էության «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 56-րդ հոդված սահմանած կարգով գույքագրման են ենթակա նաև պարտապանի տիրապետման տակ գտնվող այլ գուքը նույպես,բայց քանի որ կառավարչի կողմից պարզաբանվել,որ այդ գույի սեփականատերը պահանջել է իր գույքը պարտապանից,որը ըստ էության արդեն տրապետելու փաստի չեղարկում է,և գույքի սեթփականության իրավունքը վիճարկվում էր դատական կարգով,և գույքը գտվել է ԴԱՀԿԾ-ի կողմից արգելադրված և պարտապանին ի պահ տրված,ուստի կառավարչի կողմից չի համարվել անհրաժեշտ ավելորդ ծախսերի կատարումը հանձինս գույքի պահպանության վերաբերյալ,կամ կրկնել նույն պրոցեդուրան ինչ կատարվել է ԴԱՀԿԾ-ի կողմից,այլ որոշել է

սպասել մինչև դատարարի համապատասխան որոշման կայացումը,որից պարզ կլիներ գույքի սեփականության իրավունքի որպիսությունը:

Ինչ վերաբերվում է նույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կառավարչի «համաձայնությամբ և հսկողությամբ»բառերին,ապա իր կարծիքով ներկա պռոբլեմը քննիչի կողմից ճիշտ է վերհանված,քանի որ գոյություն չունի որևէ կարգ կամ պարզաբանում,թե այդ հսկողությունը ինչպես և ինչ չափով է իրականցվում:Իրականության մեջ օրենքի հոդվածի իրագործման մեջ կառավարիչը իրավասու չէ պարտապանի /տնտեսվարող սուբեկտի/ վրա լրացուցիչ պարտականություններ դնելու կամ որոշակի պարտականություններ թելադրելու, այսինքն առկա է օրենքով սահմանված պարտականություն,բայց չկան դրանց իրագործման մեխանիզմներ և իրավունքներ,որպիսի պռոբլեմը կառավարիչների կողմից լուծվում է տարբեր կերպ,այս դեպքում կառավարիչը հսկողությունը կենտրոնացրել է հարկերի հաշվարկման և վճարման վրա,որը վերջնական արդյունքում դարձել է ոչ արդյունավետ,քանի որ պարտապանը գտնվել է անբարեխիղճ և ըստ էության թաքցրել է իր իրական շրջանառությունը,որը ըստ էության կառավարչի ուժերով վերահսկելը անհնար է:

Հանձնաժողովի անդամի կարծիքով կառավարչի գործողությունները եղել են օրենքի սահմաններում և կառավարիչը ուղղորդվել է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 56-րդ և 47-րդ հոդվածներով իրեն ընձեռնած իրավունքներով և 29-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների սահմանում:Հանձնաժողովի անդամն առաջարկեց կարճել կարգապահական վարույթ կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյանը հայտնեց իր կարծիքը առ այն որ ինքը համաձայն է արտահայտված կարծիքի հետ և գտնում է,որ միջնորդգրով բարձրաված խնդրի վերաբերյալ իրենք որպես Կարգապահական հանձնաժողով պետք է միջնորդեն ՍԳԿԿ ԻԿԿ-ին մշակելու ընդհանրացված կարգ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կառավարչի կողմից **«հսկողության»** իրականացման վերաբերյալ և ձեռնարկել միջոցներ օրենսդրական փոփոխությունների միջոցով կառավարչի իրավունքների և պարտականությունների համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ ինքը կարող է ընդունելի համարել,որ կառավարչի գործողությունները «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի գույքագրման ընթացքում իրականացվել են օրենքին համապատասխան ,քանի որ կառավարիչը համարել է որ տարբեր առումներով վիճելի գույքը ամեն դեպքում իր տեսադաշտում է և այն օտարվելուց կամ փչանալուց պահպանված է,այսինքն այն փաստացի և ըստ էության հաշվառված է ու լրացուցիչ ակտավորման կարիք չի պահանջում:

Ինչ վերաբերվում է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կառավարչի կողմից պարտապանի բնականոն գործունեության նկատմամբ հսկողության սահմանման պարտականությանը,ապա այս պարագայում կառավարիչը պետք է ինչ որ տեղ նաև կանխօրոշեր պարտպանի անբարեխիղճ գործողությունները:

Բացի դրանից օրենքում նշված «հսկողություն»-ը նույն օրենքի այլ հոդվածներով սահմանված ունի միայն մեկ չափանաշ այն է պատապանի գործողությունները չպետք առաջացնեն նոր պարտավորություններ,այսինքն կառավարչի հսկողությունն էլ պետք է միտված լինի պարտավորությունների չավելացմանը,որը տվյալ դեպքում կապված է պարտապանի շրջանառության վերահսկողության հետ,որի իրականացման մեխանիմներ և իրավասություններ կառավարիչը չունի և անբարեխիղճ պարտապանների դեպքում,ընհանուր առմամբ կառավարչի գործունեությունը կարող է դառնալ անարդյունավետ,որը և տեղի ունեցել այս դեպքում:

Հանձնաժողովի նախագահն առաջարկեց «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5-րդ հոդվածի 5.1 մասի 5-րդ կետի հիմքով նախազգուշացնել Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Լևոն Պետրոսյանին,իսկ .ներկա կառավարիչ՝Արտակ Պետրոսյանին հանձնարարել վերացնել բացահայտված թերությունները:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ և քվեարկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 1
Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝
1.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 16.06.2020թ-ին ստացված,ՀՀ Քննչական կոմիտեյի Երևան քաղաքի քննչական վարչության՝ հատկապես կարևոր գործերով քննիչ՝ Ա.Ս.Մնացականյանի միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով՝ Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի նախկին և ներկա սնանկության գործով կառավարիչներ՝ Լևոն Պետրոսյանի և Արտակ Պետրոսյանի գործողությունները/անգործություն/, օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 հիմքով Ա/Ձ Ռուզաննա Լյուդվիգի Սարգսյանի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Լևոն Պետրոսյանին,հայտարարել նախազգուշացում, իսկ ներկա կառավարիչ՝Արտակ Պետրոսյանին հանձնարարել վերացնել բացահայտված թերությունները:

2.Հաշվի առնելով միջնորդությամբ բարձրացված հարցերը և դրանց հետագայում այլ վարույթներում նույնպես բացառելու նպատակով ձեռնարկել գործուն միջոցներ մշակելու և կանոնակարգելու կառավարչների կողմից 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կառավարչի կողմից պարտապանի բնականոն գործունեության նկատմամբ **«հսկողության»** սահմանված պարտականության իրականացումը:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյան